

Մեր հարցն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
 Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
 Տ Է Լ Է Ֆ օ Ն № 253.

Ցայտարարուեցին նաև վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.
Տ Է , Է Ֆ Օ Ն № 253.

Բանը հենց այն է, որ գրելով մեր այն տո-
ղերը, որոնք վրդովմունք են պատճառել պե-
տությանը, մենք շատ լաւ գիտէինք, որ այդ-
պիսի աշխատանք մեզանում չէ կատարվել:
Միտուն տարվայ ընթացքում մենք մի երկու-
քայլ արել ենք և կանգ առել: Յիշենք մեր աշ-
խարհաբարի նախահայրերին: Արդիւնանցը հա-
մոզված էր, որ գրաբարը չը պիտի կորչի: Եւ
«Զանգին» նա սկսեց ժողովրդական բաբա-
ռով, բայց վերջացրեց գրաբարով: Ասում են,
որ նա այդպէս էր արել այն պատճառով, որ
իւր աշակերտներին կարողանայ հետզհետեւ
աշխարհաբարից մոցանել գրաբարի մէջ: Դուրս
էր գալիս, որ աշխարհաբարը մի ժամանակա-
ւոր իր կողմ է, մի անկախ ու ինքնուրույն լեզու
չէ, որ կարող է ասրել առանց ինստիտուկանե-

խումբը տանում է, զբեկավար իրան ամառվայ այս շրջանին ամեն զուգարժեքներին, նոյն իսկ ընտանիքի երեսը տեսնելուց, որովհետև կրկնողութիւնները երեկոն են լինում, իսկ ցերեկը ծառայում են, և այս ամենը յանուն դադարի: Միթէ այսուհետեւ էլ պիտի անապարհը գտնվենք զէպի խմբի գործունէութիւնը:

Դա յանցանք կը լինէր:

Համակրող

ՆՅՐՔԻՆ ԼՈՒԻՐԻ

Մենք ստացանք Վիեննայի Միթթարեան տպարանից հրատարակված Ազգային Մատենադարանի 47-դ գիրքը՝ պրոֆէսոր Հոլզէր Պեդերսենի «Նպաստ մը հայ լեզուի պատմութեան» վերնագրով, որ գերմաներէնից թարգմանել է հ. Գրաբերին Գրաբերին: Հեղինակը մի երկտասարդ է, պրոֆէսոր Կոպենհագենի մատակարարին համեմատական լեզուաբանութեան կաճառի, որ զբաղվում է մասնաւորապէս և հայագիտութեամբ: Ներկայ ուսումնասիրութիւնը առաջ տալիս էր «Հանդէս Անտիքային» մէջ և այժմ առանձին գրքով լոյս է տեսել:

Թիֆլիսում էլքերաբար մտնելու պատճառով տեղական ֆիզիքական դիտարանի մաքնիսային բաժինը կարող է ենթարկվել անհանգստութեան: Այդ պատճառով հարց էր յարուցված տեղափոխել այդ բաժինը Մցխէթ: Վճռված էր այդտեղ շինել նոր շէնք, որը պահանջում էր 80,000 ռ. ծախք, որից 30,000-ը որոշված էր այս տարի և եթ յանձնել գործադրութեան: Բայց Հեռաւոր Արևելքի պատերազմի պատճառով այդ կրեկտը դադարեց, այնպէս որ այժմ դիտարանի վերադառնալը ծրագրում է շինել տալ միմիայն 2—3000 ռուբլի արժող ժամանակաւոր շէնք, որը կարելի է գլուխ բերել 2 ամսվայ ընթացքում:

«Ե. Ա.» լրագիրը հաղորդում է, որ յունիսի 21-ին, առաւօտեան ժամը 9-ին, «Կովկ. և Մեր.» ընկերութեան «Իշխ. Բար.» նաւով Բազու բերվեց Պարսկաստանի ուսանական հանգուցեալ արտակարգ դեսպան Պ. Մ. Վլասովի դիակը: Ուղևորութեան բոլոր ճանապարհներին պարսիկ ժողովուրդը և իշխանութիւնը հանգուցեալի դիակին ցոյց տուին պատշաճաւոր պատիւներ: Էնզէլիի ամբողջ նաւակայանը ծածկված էր սուղի նշաններով զարդարված մակոյկներով ու բարկամներով: Ռուսաց հիւպատոսը նաև լրա ճառ ասաց: Բազուի մէջ հանգուցեալի դադարի վրա դրվեցին մի քանի պսակներ:

Մի քանի օր յետոյ, յունիսի 1-ին սկսած Թիֆլիսի և Բաթումի միջև շարժվող արագ զնացների մէջ—I և II կարգի վագոններում մտցվում են համարաւորված տեղեր: Այդ երկու կարգերի բոլոր ճանապարհորդները, եթէ ցանկան, կարող են ստանալ անկողնու համար անհրաժեշտ իրերը—բարձ, բարձի կրես, երկու սաւան և վերմակ (բարակ կամ հաստ),

բի: Ստեփանոս Նազարեանցը, պաշտպանելով աշխարհաբարի իրաւունքները, ճանաչելով նրա կատարեալ անկախութեան ահագին խորհուրդը, այնու ամենայնիւ, մի մարդ էր, որ գրաբարի խիստ ազդեցութեան տակ էր գտնվում և իր գրական գործունէութեան վերջերում արդէն մի այնպիսի աշխարհաբարով էր գրում, որ միայն անունով էր աշխարհաբար:

Մեր վերանորոգիչները մի քայլ երկու քայլ արին և կանգնեցին: Գրաբարը լեզուից, հայ ժողովրդական լեզուն մնաց թաղման զանձ: Զինչու է, ժողովրդական լեզուով բազմաթիւ վէպեր ու պիեսներ գրվեցին, բայց այդ գրքունեքները մէջ լեզուն երևում էր իբրև անշատ ու առանձին գաւառաբարբառ, իբրև հուժնիւ: Ոչ ոք հիմաւոր կերպով չէր մշակեց այդ նիւթը, ոչ ոք չէր կարողացաւ ժողովրդական լեզուի ոգին ներկայացնել իր ամբողջութեան մէջ: Եւ մենք մնացինք կապված-կաշկանդված այն ձևերի մէջ, որոնք մի անգամ ընդունված էին մեր վերանորոգիչների կողմից առանց բազմակողմանի ուսումնասիրութեան: Այսպէս, եթէ ուշագիւր վերաբերմունք լինէր դէպի ժողովրդի լեզուն, մենք այսօր այնքան հետու չէինք լինի արևմտեան և արևելեան լեզուների միանմանութիւնից: Չէր գիտնէր, օրինակ, թէ ինչո՞ւ մեր վրին փաթաթված է բացառական «ից» վերջաւորութիւնը, քանի որ մեր տեղական բոլոր բարբառները մէջ միանգամայն «հն» վերջաւորութիւնն է տրուում: Եւ այսպիսի հարկւրաւոր հարցեր կան, որոնք դեռ չեն շոշափված, որովհետև մեր մէջ դեռ չէր ըն ու մարմին չէ ստացել ժողովրդական

անկախելով 1 ռուբլի: Երեսարբի և սապին ունենալու համար պէտք է վճարել 10 կոպէկ:

Ռուսական արդիւնագործութեանը և առևտրին օժանդակող ընկերութեան Վարչալայի բաժնին կից եղած գիւղատնտեսականների պատգամաւորութիւնը, ինչպէս հաղորդում է տեղական «Днев.» լրագիրը,—միջնորդութիւն է յարուցանելու և խնդրելու, որ թոյլատրվի իրանց ունենալու սեփական տպագրական օրգանը: Այդ օրգանի նպատակն է լինելու մշակել և քննադատել կանանց գիւղատնտեսական կրթութեան վերաբերող բոլոր հարցերը:

Կօջօրի եկեղեցու երէցփոխ պ. Պոստոլիան խնդրում է մեզ յայտնել հետեւեալը. «Կօջօրի եկեղեցում այս տարի էլ, ինչպէս և միւս տարիները, երգելու է քառաձայն խումբ: Չը նախած, որ պ. Բ. Բերինեանի խումբը երեք տարի շարունակ երգել է, բայց և այնպէս յարմար դատվեց այս տարվայ սեզօնի համար հրաւիրել պ. Լ. Մամիկոնեանի խումբը, որը բաղկացած է 12 հոգուց: Պումբը առաջին անգամ կերգէ կիրակի, յունիսի 27-ին»:

Այս տարվայ նոյեմբեր ամսին մտադրութիւն կայ Թիֆլիսում ժողովի հրաւիրելու Անդրկովկասի բրինձի մշակութիւնով պարագիւր անձերին: Ժողովի զբաղմունքները տեղի են ունենալու երկրագործութեան միջնորդի կովկասեան լրագրի գրասենեակում:

Պատշաճաւոր իշխանութիւնների շրջանում հարց է յարուցված ցուցակագրել այն բոլոր կանանց, որոնք ծառայում են կամ ուղում են ծառայել իբր բօնաներ կամ տնական դաստիարակչուհիներ: Բացի ցուցակագրելուց, պէտք է նրանց վրա նշանակվի դպրոցի հսկողութիւն և հաւաքվին անցեալ կիսնրի մասին տեղեկութիւններ: Գաղտնի հսկողութիւնն առանձնապէս խիստ է լինելու մանաւանդ արտասահմանից եկած բօնաների վրա, որովհետև նրանց անցեալի մասին տեղեկութիւնները հաւաքելը կամ չափազանց դժուար է կամ անհնար: Այդ բոլոր միջոցները գործադրելու ստիպում է այն հանգամանքը, որ տնական մասնաւոր դաստիարակչուհի են մտնում յաճախ շատ խտուար ու փշացած էակներ, որոնք ֆիզիքապէս ու բարոյապէս վարակում են իրանց խնամքին յանձնված սաներին:

Թիֆլիսի քաղաքային խորհրդի այն վճիռը, որով ընդունվում է Կովկասի ուսուց տեխնիկական ընկերութեան առաջարկը՝ մասնակցել Պուլկինեան գրադարանի երկրորդ յարկի շինութեան ծախքերին, որպէս զի ընկերութիւնը գիտեղլի մի յայտնի ժամանակ նրա մէջ, պ. նախագահեալը հաստատել է:

Թիֆլիսի քաղաքային սանիտարական բժշկական տեսչի տեղեկատուելից երևում է, որ ժա-

լեզուի վրա հիմնվելու գաղափարը: Կիսատպատ, վայր ի վերջ մի բան արված է և երեսի վրա թողված: Ղարաբաղի բարբառի մէջ կան «զ»-ով հայցական հոլովի հետքեր (օրինակ ասում են «զինքն սպանեց»): Ո՛րքան այս երևոյթը մտնեցնում է մեզ թիւրքահայերի բարբառին: Բայց մի է մտածել այդ երևոյթից օգտվելու մասին՝ գրական լեզուի միութիւն ստեղծելու համար:

Պ. Աղոնց կարծում է, թէ մեզ գինաթափ կան, ասելով թէ «Մշակի» լեզուն էլ գրաբարից վերցրած շատ բաներ ունի: Բայց նա և առջև մենք երբեք չենք էլ ասել, թէ բացառութիւն ենք կազմում: Ընդհանուր երևոյթի մի կտորն էլ մենք ենք, ինչո՞ւ գարմանալ: Երկրորդ, ասել թէ գրաբար բառերը աշխարհաբարի մէջ ցոյց են տալիս գրաբարի անհրաժեշտութիւնը՝ նշանակում է շատ սահմանափակ հասկացողութիւն ունենալ աշխարհաբարի մասին: Երբ Ղարաբաղի յետ ընկած գիւղում մի պառաւ հայ կնոջից լսում ենք «ձիաթափ ա ըլալ» խօսքերը, մենք չենք ասում, թէ այդ կինը Ներսէս Ծնորայի կամ Յոհան Օձնեցի է կարդացել, այլ պարզապէս այն ենք իմանում, որ գրաբարը մի չինական լեզուն չէր, այլ նոյն այս ժողովրդի լեզուից առաջացած մի ձեւաւորութիւն, որ ստացել է որոշ կազմակերպչութիւն, զարգացել է յատուկ ձևեր ու օրէնքներ և այդպէս կատարելով իր պաշտօնը, հնացել ու քարացել է: Մի քանի ուշադրութեամբ ականջ դնելով նոյն այդ բարբառին, դուք կը լսէք «հուր» ու «հրատ» բառերն էլ: Բայց դա չէ նշանակում թէ ժո-

մանակաւոր հիւանդանոցում ամսին 21-ին եղել են 7 հիւանդներ, որոնցից բուժելով 3, ծաղկով 3 և զիֆտերիտով 1. Կանանց հիւանդանոցում 37 հիւանդ: Ազատ տեղեր կան 18. հոգեկան հիւանդների բաժնում 50 հիւանդ. ազատ տեղ չը կայ: Նոյն տեսչի մի այլ տեղեկութիւնից երևում է, որ քաղաքում նոյն թիւին նկատված են 15 հիւանդութեան դէպքեր, որոնցից ծաղկի՝ 1, բուժել՝ 1, կարմրութիւն 7, զիֆտերիտ 4, հազ (коклюш) 2:

Ներքին գործերի մինիստրը մի շրջաբերական գրութիւնով միջոցներ ձեռնադրելու համար հաղորդել է պ. պ. նախագահներին, որ՝ բժշկական խորհրդի վճռի և ֆինանսների մինիստրութեան հետ կայացրած համաձայնութեան համեմատ՝ անհրաժեշտ է ձանաչված արգելի «թէյ» անուան տակ որ և է ուրիշ արգելիք վաճառումը, բացի իսկական, առանց կեղծումների թէյից, այսինքն՝ այն արգիւնքից, որ պատրաստվում է Thea chinensis կոչված բոյսի տերեւներից:

ԱՅՄԱՅԱՅՄԱՅԻՑ մեզ գրում են. «Եղանակները գարնան սկզբներին մինչև մայիսի վերջերը անձրևային լինելուց յետոյ մեղանում սկսվեցին 10—15 օր միանգամից չափազանց շոքեր և չորային անցնել, որով եղանակի այդպիսի յանկարծակի փոփոխութիւնը սկսեց մեր բուսականութեանը, մասնաւոր հացադոյսերին զնախել և այրել: Շատ արտեր դեռ կարգին գլուխ չը տուած ու չը հասած, սկսեցին դեղնել և չորանալ, և եթէ մի քանի օր էլ այդպէս շարունակվէր, համարեա բոլոր արտերն էլ կը ձիւսվէին, սակայն բարեբաղդաբար ահա մի քանի օր է, որ մեղանում սկսեց կրկին անընդհատ անձրևներ տեղալ, որով շատ արտեր փրկեց կորստից ու փշացումից: Այս վիճակի մէջ են գտնվում և բանջարանոցները, բոստանները: Իսկ ծառայտուղները, չը նայեց ձիւսվել են, սակայն կրկին կան տեղեր, որ թէ քանակութեան և թէ որակութեան կողմից լաւ բերք են խոստանում»:

ԴԵՐԲԵՆԴԻՑ մեզ գրում են. «Յունիսի 19-ին, երեկոյեան ժամի 10-ին, այստեղի քաղաքային այգում կատարվեց մի եղեռնագործութիւն: Մի պարոն, որ Շուշի քաղաքում յայտնի է ծաղաքանց Ալանէսի տղայ Ներսէս անունով, ատրճանակի երեք հարուածով տեղի ու տեղը սպանեց իր բրոշ աղվան՝ օրիորդ Սառայ Պողոսեանին: Սպանութեան պատճառը, ասում են, այն է, որ յիշեալ Ներսէսը բռնի կամեցել է ամուսնանալ օրիորդի հետ, բայց օրիորդը մերժելով մերժել է ու միշտ խոյս տուել նրանից: Սպանված օրիորդը բաւականին դարգացած օրիորդ էր, աւարտել է Բազուի իգական գիմնազիան, դասատու է եղել գնապան դպրոցներում, ապա վերջերս մտադիր էր գնալ արտասահման բժշկութիւն սովորելու: Ոճրագործը դեռ բռնված չէ»:

ՊՈՐՈՐԴ ԳՐԱԲԱՐ Ե ԽՈՍՈՒՄ: Հարիւրաւոր ու հազարաւոր այսպիսի օրինակներ կան: Ո՛ր է հաւաքել ժողովրդի լեզուի բառերը, որպէս զի իմանանք, թէ ինչ հարստութիւններ կան այնտեղ: Բայց որ կան այդ գանձերը, որ նոր լեզուն «համաօրէն տիրապաւում», «բառերն ըմբռնելու» համար անպատճառ հարկաւոր չէ «Բերականութիւն ի պէտս զարգացելուց» ուսումնասիրել, այդ կարող է ցոյց տալ ձեզ հէնց այն փորձի փորձը, որ տուեց պ. Ժիգրան Նաւասարդեանը անցեալ տարի, հրատարակելով Արարաբեան բարբառի բառարանը: Ներկայումս Սահակ վարդապետ Ամատունին աւելի մեծ չափերով և լայն ծրագրով պատրաստում է ժողովրդական լեզուի մէջ պատահող ոճերի, դարձուածների մի խոշոր ժողովածու: Տեսնողները հիացմունքով են խօսում համեստ վարդապետի այդ գործի մասին: Ահա պ. Աղոնց, որտեղից պիտի գայ մեր լեզուական հարստութիւնը: Ահա այդ տեսակ գործերին պիտի դիմեն մեր գրողները, լեզու սովորողները և ոչ թէ Բազարատունու կամ Հիւրմիւլի հատորներին:

Մենք խօսել ենք ոգու, ձևերի, կազմի մասին, մեզ պատասխանում են, բառերի մասին խօսելով: Մենք ասում ենք, թէ գրաբարը ստրկացնում է, մեզ պատասխանում են՝ միթէ օտար լեզուները չեն ստրկացնում: Սա պատասխան դառաւ: Եւ մի և նոյն ժամանակ պ. Աղոնց գրում է, որ հին լեզուից պէտք է վերցնել միայն բառերը, «նոր գրական լեզուի և հին յարաբերութիւնը լինելու է գլխաւորապէս բառարանական»: Եթէ այդպէս է, աւելի

ԲԵՇԵՐՔԵՆԻ գիւղից (Ալեքսանդրօպօլի գաւառ) գրում են մեզ. «Յունիսի 17-ին, ս. Սահակ և Մեսրոպի տօնին հոգեհանգիստ կատարվեց մեր եկեղեցում: Տաճարը լիքն էր գիւղիս երկեսու բազմութեամբ: Մեր կենտրոնի նորընտիր գործակալ Յովհաննէս քահանայ Տէր-Յովհաննէսեանը պատմեց ժողովրդին հասկանալի լեզուով տառերի գիւտը:—Այս տարի սարսափելի անձրևներ են գալիս մեզանում, համարեա բոլորն էլ կարկտախոն, բայց զիստ չեն պատճառել արտերին: Այս տարի մեր արտերում շատ մուկ կայ, սակայն կարկտախոն անձրևները փշացրին բոլորին: Անձրևներից գոյացած հեղեղները զգալի ձեւաներ տուեցին գիւղացիներին, բռնելով հազարի քանակութեամբ վառելու աթարներ և աւաղի հաստ շերտով ծածկելով կաղերը: Բայց ամենացաւալին այն է, որ մեր գիւղի մեակ շուր տուող աղբիւրը գտնվում է մի մեծ հեղեղատի դէմ, որից ամեն անգամ ձիւսվում է աղբիւրը: Մեր աղբիւրի շուրջ շատ առողջաբար է, օրինակ, 1892 թ. խօշրայի ժամանակ մեր գիւղից ոչ ոք չը մեռաւ. բժիշկները այդ փրկութեան պատճառը վերագրեցին մեր ջրին: Չը նայելով որ այդպիսի մի աղբիւր ունեն մեր գիւղացիք, ոչ մի միջոց ձեռք չեն առնում պաշտպանելու թէ աղբիւրը և թէ իրանց կալատեղերը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԻՐԱԶՄԻ ԾՈՒՐԴԸ

Վլադիմիրսոսիի Կալապրայի մասին տեղեկութիւններ: Լոնդոնից հեռագրում են. «Այսօրվայ առաւօտեան լրագիրները տեղեկութիւններ են պարունակում Վլադիմիրսոսիի Կալապրայի նաւերի կարկտախոնների մասին, որոնք կը ստիպեն նրանց անշարժ մնալ մի ամսից աւելի, իսկ ժամը 4-ին, կէսօրից յետոյ ստացվեց տեղեկութիւն, որ այդ Կալապրայի յարձակվեց Գինգամի վրա: Ենթադրւում էր, որ մէջ այդ լուրը իրարանցումն առաջ բերեց: Լուրերին նայելով, Կալապրայի կառավարութիւնը պահանջում է Տօգօից Կալապրայի մի մասը ուղարկել, բայց Պօրտ-Արտուրի նաւերի վերսկսած շարժումները հնարաւորութիւն չէ տալիս Տօգօին կատարել այդ պահանջը: Ենթադրւում են նաւաւորմի պիտու երկիւղ է կրում, որ եթէ նա տկարացնէ իրան, դրանով կը մեծացնէ Պօրտ-Արտուրի Կալապրայի բաց ծովը մտնելու շանսերը: (H. B.):

Ռուսաստանը անդո՞ղ է: Հաղորդում են, որ չը նայելով Կալապրայիները աշողութեան, հասարակական կարծիքը նրանց օգտին խախտվել է, որովհետև առաջադրւում էր ոչ միայն զինակոչութիւնը, ինչպէս ասում է «Daily Express» լրագիրը, ցոյց է տալիս, որ Ռուսաստանը զենքը վար չի դնի, մինչև չը ձգվէ Ենթադրւում: Այդ պայմաններում Ենթադրւում է կարող յոյս դնել Եւրօպայի բարեկամական միջամտութեան վրա: Ռուսաստանը անողորմ կը մնա իր որոշման մէջ:

Լաւ չէր լինի պարտաւորական դարձնել, որ ամեն մի գրող ունենայ մի-մի հատ Հայկական հետադիւր: Ել ինչ միտք ունի Սալանութեան և Չամչանի վրա գլուխ մաշեցնելը: Իսկ պ. Աղոնց գրում է, որ գրականութեան նուիրվող ամեն մի մարդ «պարտաւոր է զբաւար սովորել... Այս մի գրական պահանջ է և պարտք»: Ինչո՞ւ: «Ով որ ուխտում է ծառայել հայ գրականութեան, պարտաւոր է ծանօթանալ նրա անցեալին», ասում է պ. Աղոնց: Սրանով լեզուի արժանապատեանութիւնը պահված կը լինէր: ամեն մէկը հետաքրքրվել է նրա ալետ անցեալով: Ո՛րտեղից որտեղ թուա պ. Աղոնցը: Պօքը աշխարհաբարի մասին էր, այժմ դարձաւ լեզուի պատմութեան հարց: Կարծես թէ մենք արգելում ենք, որ ցանկացողը զբաղվի այդ պատմութեամբ: Այդ կարող են անել սէր և յօժարութիւն ունեցողները: Բայց պարտաւորական դարձնել գրաբարի ուսումնասիրութիւնը մենք չենք կարող, որովհետև աւելորդ ենք համարում, որովհետև ամեն մէկին մատչելի չէ կարող լինել այդ ուսումնասիրութիւնը: Լեզուի բոլոր խորհուրդները հասկանալու համար անհրաժեշտ է հիմնաւոր ուսումնասիրութիւն: Եթէ պ. Աղոնցի համար բաւական կը լինէր և այն, որ հայ վիպագրողը կամ բանաստեղծը իմանաւ «ուղղական»—արքայ, սեռական—արքայի» բերականության իմաստութիւնը, մենք այդ իմաստութիւնից ոչինչ օգուտ չենք սպասում, բացի թիւնից ոչինչ օգուտ չենք սպասում, բացի միայն թերութիւնից, որ ամենից վատն է:

(Կը շարունակվի)

Նապոմանցիները առաջարկում են Պորտ-Արտուրի անվանումը իրենց Լոնդոնից հեռագրում են «Roumanie» լրագրին, յունիսի 14-ին, թէ Զիֆուից ստացված հեռագրի համաձայն, գեներալ Օկուն առաջարկել է գեներալ Ստեփանին Պորտ-Արտուրի անվանումը իրենց, պահպանութեամբ գեներալական բոլոր պատերազմները, բայց գեներալ Ստեփանը սիրալիկ կերպով մերժել է այդ առաջարկությունը: (Kas-6087):

Լուրեր Լեհաստանից: Լեհաստանից հեռագրում են. «Յունիսի 13-ին, երեկոյան, Պորտ-Արտուրից 20 վերստ հեռու երկու հապոնական զինվորներ հանդիպեցին մեր թագնական մի վաշտին, որ թոյլ տուեց թշնամուն մօտենալ մինչև 400 քայլ: Գնդերը երեք անգամ յարձակումն գործեցին, մօտենալով մինչև 60 քայլ, բայց յետ մղվեցին: Առաջ ընկավ 4 զուռն, հապոնացիները ստիպեցին վաշտին նահանջել դէպի ամբարձրություն: Երկուսուսուս ընդհանուր կորուստները հասնում են 1000 մարդու: յունիսի 15-ին, արևածագին, սաստիկ անձրև եկավ: Կէսօրից յետոյ անձրևը դադարեց: յունիսի 16-ին, նոյն ժամին, դարձեալ անձրև եկավ: Զինացիները համարում են, որ անձրևների շրջանը արդէն սկսվել է ծանաղարկների կատարելագոյն անհանգստանքին: Մի դիվիզիան անցնելիս մի մարդ խեղդվեց և շատերին պէտք եղաւ փրկել: Մի քանի մարդիկ խեղդվեցին: Ուղիներում, Կորեայի և Նապոմանցի միջև ընկած փոթորիկ, ջրասույզ անելով 27 ծովային շալախներ, որոնք պատկանում էին «Նիպպոն-Իշի-Մարու» ընկերութեան 300,000 պուլ արկի հետ, որ սահմանված է հապոնական բանակի ուսուստի համար: Անձրևը Կլանտոնում սաստկանում է: Արև, փայլակ, տաքութիւն, անձրև—բոլորը միաժամանակ: Ծուռ սկսվեց անձրևային շրջանը Մանջուրիայում: Մեծ կոհնների փոխարէն սկսվեցին մարդեր և հակամարդեր: Աշալուրջ կերպով հակելով մէկ մէկու վրա, Կուրօկին և Կուրօպատկինը առաջ են շարժում զորքերը, կարծես շախմատներ լինեն: Երկուսուսուսները աշխատում են անցնել մեր գիրքերի ետևը և կանգնած են Լեհաստանից 20 վերստ հեռու: Անձրևները խափանում են շարժումները: Սաքերում գտնում են ժանգոտած հապոնական հրացաններ: Պատմում են, որ հապոնական արտիլերիայի ղեկավարը ամբողջացել է (H.B.):

Զինացիները անհանգստացնում են: Լոնդոնից հաղորդում են մի հեռագրի բովանդակութիւնը, որ ստացել է Լեհաստանից «Morning Post» լրագիրը: «Զերբակալված են շատ չինացիներ, որոնք լրտեսութիւն են անում հապոնացիների համար և վաֆանդուրի կուր ժամանակ ազդանշաններով յայտնում էին հապոնացիներին ուսաց բատարէաների տեղը և զորքերի կացութիւնը: Դատարանը դատապարտեց այդ լրտեսներին կախաղանի և վճիռը իսկոյն իրազործվեց: Ուսաց գլխաւոր բանակատեղում գտնվող լրագիրների բոլոր պատերազմական զինանշանները նկատում են, որ չինացիները ընդհանրապէս շատ հոգսեր են պատճառում մեր զորքերին Մանջուրիայում: Հրատարակված են երկու հեռագիրներ, մինը—Լեհաստանից, միւսը—Նիւլեանցից, գրեթէ միաժամանակ իմաստով, որոնք հաստատում են, թէ խոնարհների հրոսակները բազմաթիւ են, լաւ կազմակերպված և ղեկավարվում են հապոնական զործակալների ձեռքով, ու անհանգստացնում գեներալ Րեննեկամֆի դիվիզիան: Զինացիները—ասոված է Լեհաստանի հեռագրի մէջ—թագնում են իրանց պաշարի պահեստները, ուստի գեներալ Րեննեկամֆի զորքերին պաշար հասցնելը շատ դժուարանում է»:

(Bux. B. 61.)

Նապոմանկ գործերի քիւր. Վիէնայից հաղորդում են, որ այդտեղի հապոնական զինուորական կցորդը յայտնել է մամուլի ներկայացուցիչներին, թէ հապոնական զորքերի թիւը պատերազմի բռնի վրա հասնում է ներկայումս 200,000 հոգու: Երկուսուսուս, գլխաւորական կըրցորդի բաղերով, էլի մի բանակ ունի, 100,000 հոգուց բաղկացած և շատ ուժեղ պահեստի զորք: (Bux. B. 61.)

Ռուսաց նաւասօմի վիճակը: Լեհաստանից հեռագրում են. «Ռուսաց էսկադրան վերադարձաւ Պորտ-Արտուր: Երկուսուսուս նաւատորմը երկու անգամ խոյս տուեց կուրից: Դիմանալով երեք պահանային յարձակման, որոնց ժամանակ հապոնացիները բաց թողեցին 9 ական, մեր նաւերը, ոչ մի վնաս չը կրելով, մտան նաւահանգիստը: Ամբողջ օր մնալով բաց ծովում, մեր էսկադրան ցոյց տուեց, իբրեւ անկասկած իրողութիւն, որ հապոնացիները ճանաչում են իրանց նաւատորմի տեղութիւնը և արդէն սկսվել է մեր նաւատորմի տիրապէս» (B. B. 61.):

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 13/26 յունիսի

Թիւրքիայի մայրաքաղաքը ֆնացել է նոյն անշարժութեան մէջ, ինչ որ տեսել էի իմ վերջին այցելութեան ժամանակ, սրանից 9 տարի առաջ:—Նոյն գեղեցիկ Բոսֆորը, նոյն սքանչելի ծովափերը, նոյն աղտոտ փողոցները, նոյն բոլոր շէնքերի վոնմանները և նոյն կառքերի զանազանութիւնը: Միակ փոփոխութիւնը, որ ես նկատեցի, այդ քաղաքի գլխաւոր փողոցի՝ Պէրայի «շիտակ ճամբայի» չափազանց նեղ մասերի փոքր ինչ լայնացվելն է և Շիշլի ու «Նշան թաղը», թաղերի մէջ նոր բնակարանների աւելանալը:

Այստեղի հայերի վիճակն էլ ճիշտ նոյնն է, ինչ որ էր 1895-ին: Վերջին մի երկու շաբաթվա ընթացքում 200-ից աւելի գաւառացիներ ասիայի են անմիջապէս հեռանալ իրանց երկրի: Զէ թոյլատրվում, որ հայերը մի տեղից միւս տեղ գնան նոյն իսկ Թիւրքիայի սահմաններում: Նաև արգելված է երկրից դուրս գալ: Լաւ է ապրում թէ վատ, գործ ունի թէ չունի, նա պէտք է անշարժ մնայ իր գաւառում, իր գիւղում: Հնարաւորութիւն չը կայ յարաբերութեան մէջ մտնելու զրացիների հետ առևտրական կամ որ և է տնտեսական գործերի համար:

Այն բարոյական և տնտեսական ճնշումը, որին ենթարկված են այժմ հայերը, միշտ չէ տալիս նրանց ապաստան գտնելու իրանց առևտրական գործերով: յոյները և հրէաները ճարպիկութեամբ օգտվում են այս անհագնալից և սապարէզը հետզհետէ անցնում է այս կերպիւնների ձեռքը: Այս կերպով հայերը կորցնում են իրանց ունեցածը, չեն կարողանում նորը աշխատել և սարսափով են մտիկ տալիս իրանց տնտեսական ապագայի վրա:

Կ. Պոլսի լրագիրներն այժմ գրառված են ուսուցանողական պատերազմով: Առաւօտները կարդում են թուրք լրագիրները «Իկդամ», «Սաբահ» և այլն. թերթերի կէսից աւելին յատկացված է պատերազմական լուրերին: Այս լրագիրներն իրանց սեփական հեռագրական լուրերն էլ ունեն Վիէնայից, Պարիզից, Լոնդոնից և Պետերբուրգից, թէև, որքան ես հետևեցի, ոչ մի կարևոր բան չեն հաղորդում, այլ կրկնում են հեռագրական գործակալութիւնների լուրերը: Երկրորդ ընդարձակ տեղը գրառում է սուլթանի անձնաւորութիւնը: Երէկ «Սաբահ»-ի մէջ կարգում էի մի առաջնորդող յօդուած «Թիւրքիա և Աւստրիա» վերնագրով, այն շքանշանի առթիւ, որ սուլթանն ուղարկեց Աւստրիայի կայսրին: Առաջնորդող յօդուածը վերաբերվում էր սուլթանի անձնական մեծ արժանիքների մանրամասն նկարագրութեան և միայն յիշատակում էր Թիւրքիայի և Աւստրիայի փոխադարձ յարաբերութիւններին: «Սաբահ» կիսապաշտօնական թերթ է համարվում: Նրա հրատարակողը և արտօնատէրը հայ է—Միհրան Նազգաշեան, բայց խմբագրիչները մօլդոնացի թուրքեր են:

Հայ օրագիրներըց միայն «Սուրհանդակն» է հրատարակվում առաւօտները, միւսները՝ «Բիւզանդիոն», «Արևիկը», «Մանդուկէի էֆեդեր»։ «Ճէրիտէի Շարքիլէ» և «Մէճմուլայի Ալբար» կէսօրից յետոյ: Ամենից տարածվածը և բովանդակութեան կողմից ամենից հարուստը «Բիւզանդիոն» է, որի հրատարակիչ-խմբագիրը՝ Բիւզանդ Բէշեանը՝ կարողացել է այնպէս ճարպիկ կերպով գործը տանել, որ լրագրի արդիւնքով մի տուն է գնել իր համար: Հայոց պատերազմաբարձրում նորութիւններ են կատարվել. նախկին անշուք սրահի փոխարէն այժմ փառաւոր դահլիճ է սարքված, որը արդիւնք է Օրմանեան պատերազմի և Կիւսմիւլի մեծ նորութիւն տեսայ մայր-եկեղեցու, որ կից է պատերազմաբարձրին: Շատ ճաշակով է դարձրված մայր-եկեղեցին, այսինքն յատկապէս միջին մասը, որովհետեւ մայր եկեղեցին բաղկացած է 3 միմեանց-յարակից եկեղեցիներից:— Եկեղեցու մէջ գրան մօտ շատ գեղեցիկ շէնքի է կանգնված հանգուցեալ Ներսէս պատրիարքին: Ճանաչելի է, որ պատերազմի պատկերն էլ դրվէր շէնքի վրա: Մայր-եկեղեցին ինչպէս առաջ, այժմ էլ, ամբողջապէս ծածկված է յարմար նստարաններով, կաթոլիկ եկեղեցիների նման:

Օրմանեան պատերազմը յարգանք է վայելում առանձնապէս ղեկավարական մարմնի կողմից: Պալատը և Բարձրագոյն Դուռն էլ թէպէտ «Բիւզանդիա» չեն համարում նրան, բայց գոհ

են, որ նա այս դժուար պարագաներում քաղաքագիտական տակտով է վարվում: Օրմանեան պատերազմը զարգացած և լեզուագէտ անձնաւորութիւն է, mondain—«աշխարհիկ» մարդ է և ոչ թէ կրօնաւոր, և յաջողում է լաւ յարաբերութիւն պահպանել միմեանց անհաշտ տարրերի մէջ: Ինքն ընդդէմ է յայտնուել գործողութիւնների, որոնցից որ և է օգուտ չէ սպասում:

Հայ-կաթոլիկների պատերազմաբարձրում պատերազմութիւններ են տեսնում նոր կաթոլիկոս պատերազմի ընտրութեան: Ընտրութիւնը նըրանակված է յունիսի 20-ին, ուրեմն 9 օրից իրանց գտնված գաւառներից հեռագրել են, թէ մտադիր են անձամբ գալ և մասնակցել կաթոլիկոսի ընտրութեան, ուստի ճանապարհներին անկանոնութեան պատճառով, երկիւղ են կրում, որ բոլոր ժամանակին չեն կարողանայ հասնել և ընտրութիւնը կը յետաձգվի: Ընտրութիւնը կատարում են եպիսկոպոսները և ժողովուրդի ու եկեղեցականութեան պատգամաւորները: Աշխարհական պատգամաւորների թեկնածուն է Աղանայի առաջնորդ Թիւրքանը, եպիսկոպոսը, որ շատ եռանդուն և մի և նոյն ժամանակ հայրենասէր մի եկեղեցական է: Կաթոլիկ ղեկավարների՝ մասնաւոր ֆրանսիական ղեկավարի ազդեցութեամբ միջոցներ են ձեռնարկվում և մինչև անգամ այժմեանից արդէն պատրաստում են թիւրք կառավարչական շրջաններին՝ Թիւրքանի ընտրութիւնը աջակցելու համար: Աշխարհական պատգամաւորներն ամեն կերպ աշխատում են, որ եպիսկոպոսներն եւ համակերպներն այս վերջիններն ինչպէս վերջին անգամ, այժմ էլ թշնամաբար են վերաբերվում Աղանայի առաջնորդի ընտրութեան, բայց յոյս կայ, որ նրանց հակառակութիւնը կարելի կը լինի ջլատել:

Այստեղ են արեւմտական արտակարգ ղեկավարութեան անդամները: Զօրապետ Մէլուշա և իր հետևորդները, որոնց մէջ եկել 2 եկեղեցական, բայց արեւմտեանից ուրիշ լեզուով չեն խօսում: Ունեն մի թարգման նոյնպէս սեւամորթ արեւմտեանի, որ շատ լաւ խօսում է ֆրանսերէն: Սրանք երբ նոր էին եկել, այցելել էին յունաց պատերազմաբարձր և լուրեր էին տարածել, որ իբր թէ մտադրութիւն ունեն միմեալ յունական եկեղեցու հետ: Բայց ինձ հաստատ աղբիւրից հաղորդեցին, որ այդ միտքը վերջնականապէս թողված է: Օրմանեան պատերազմը փոխադարձ այցելութեան էր եկել պ. Մէլուշային և նրանց տեսակցութեան ժամանակ, ի միջի այլոց, յուզվել են չոր կրօնական հարցեր, այսինքն Գրիգորի մէկ բնութիւն թէ երկու բնութիւն ունենալը: արեւմտեանից, ինչպէս երևում է, հետաքրքրվում են երկաթեանից և միաբանների հարցով:

Կ. Պոլսում նրանք աշխատում են Երուսաղէմում կողտերի (խալիֆների) հետ ունեցած իրանց կառուածական վէճը կարգադրել: Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնի օրը, երէկ, Օրմանեան պատերազմը հանդիսաւոր պատարագ մատոյց Ղալաթիոյ եկեղեցու, որին ներկայ էին արեւմտեանից: Աստուածաբան պատերազմը այս առթիւ իր քաղաքում մեծ հմուտութեամբ բացատրում էր եթովպացիների մէջ բրիտանիկութեան տարածվելու պատմութիւնը:

Երէկ Կ. Պոլսի եկաւ Բիւրլիի պարսից ղեկավար խորհրդական և մեր ծանօթ Շէքսպիրի թարգմանիչ Յովհաննէս Ուս-Մասէհեան:

Սարուխան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 յունիսի

ԳԻՄՆԵՑԶԷ: («Րէյտէր»): Զինադադարի պայմանաթամը լրանալուց յետոյ անգլիացիները սկսեցին իրանց արշաւանքը, յարձակում գործեցին մարտկոցի վրա և գրաւեցին ծայրին գետնոված մարտկոցները: Ազգաբնակչութիւնը և տրեւտցիները յամառ դիմադրութիւն ցոյց տուին: Սպանիացի անգլիական մի պօրուչիկ:

ԼՕՆԴՕՆ: Անգլիացիներն այրեցին դիւղը և Բէշան վանքը: Գլխաւոր յարձակում տրեւտցիների դիրքի վրա Գիւմպպի մօտ պէտք է տեղի ունենայ այսօր երեք զօրաստիւններով, որոնց ընդհանուր թիւն է 1200 մարդ: Գիւմպալ Մակլոնալդ կարծում է, որ նրան կաշնողով տրեւտցիներին ծանր կուրից յետոյ միայն:

ՄԻՆՍԿ: Յունիսի 9-ին գումարվելու է գէմսովի արտակարգ ժողով՝ աշխատանքի

օգնութիւն կազմակերպելու մասին անգործների համար:

ԳԵՄՆԵՑԶԷ: («Րէյտէր»): Անգլիական զօրքերը գրոհ տալով վերջին տրեւտցիները մարտկոցը: Անգլիական զօրքերի կորուստները մեծ չեն:

ԼՕՆԴՕՆ: Տօկիօից ստացած տեղեկութիւնների համեմատ, վրադիօստօկեան էսկադրան փոխադրող նաւեր: Երկիւղ են կրում, որ բրիտանական «Կոմմօն-Ուէլտ» նաւը ուսաների ձեռքը ընկած լինի, որովհետեւ այլապէս նա վաղուց արդէն պէտք է եկած լինէր Սասէքս:—Նիւ-Չեռլանդից ստացված հեռագրական տեղեկութիւնների համեմատ, ուսաների հարաւային դիրքը գտնվում է Գայլփօնի մօտ: Գիւմպալ Կուրօկին հարաւային զօրասիւնը մօտենում է դէպի Տանչի 20 մղոն Գաշիաո նշանաւոր հանգուցաւոր կայանից: Այդ զօրասիւնը ամենայն հաւանականութեամբ աշխատում է կտրել ուսանական դիմը Գայլփօնից դէպի Նիւլա: Զը նայելով անձրևին, հապոնացիները եռանդով արշաւում են:

ՏՕԿԻՕ: Գիւմպալ Կուրօպատկին ուժեղացրեց իր դիրքերը Գաշիաոսում 30,000 մարդով:

ԼԵՍՕՆՍ: Կրկին սաստիկ անձրև է գալիս: Մինչև անձրևների շրջանի կանգնելը կարելի է յոյս ունենալ, որ էլի մի քանի պարզ օրեր կը լինեն:

ՍՕՖԻԱ: (Դիմադրական շրջաններից): Թիւրքական աղբիւրներից հաստատվում են բոլորական հաղորդագրութիւնները սովի վերաբերութեամբ Օթերիդում: Ֆաղաբացիական գործակալները կերթան պատկու շրջանում սովի չափերը որոշելու և միջոցներ որոնելու նպատակով օգնութիւն հասցնելու համար կարօտեալներին:

24 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Օրէնքների ժողովածու» մէջ տպված է, թէ պէտք է փոփոխութիւններ մտցնել պետական յանցագործութեան գործաւարութեան կարգի մէջ և գործ դնել նրանց վերաբերմամբ նոր բրեժկան օրէնագրութեան որոշումները:—Նշանակված են հեծելազօրքի գեներալ Տէվիաշվի Տուրկիստանի գեներալ-նահանգապետ, գեներալ-էյտանանտներ Պրէսկոտ 3-դ հետևակ զօրաբաժնի հրամանատար և Բազդոնով—16-դ զօրաբաժնի հրամանատար:—Թագաւոր Կայսրը, համաձայն Սրբազան Միւսօղի որոշման, Բարձրագոյն բարեհաճեց, որ վերացվի հոգեւոր կոնսիստորիաների կանոնադրութեան ամուրիութեան դատապարտող 253-դ յօդուածը այն անձանց համար, որոնց պսակը լուծված է նրանց ամուսնական անհաւատարմութեան համար:—Պաշտօնական տեղեկութիւններ Հեռաւոր Արեւելից յունիսի 23-ին չեն ստացված:

ԼԵՍՕՆՍ: Լեհաստանից 25 մղոն հեռաւորութեամբ արդէն երկու օր շարունակվում է ըստ երևոյթի, տաք կուր:

ՏԵՄԵՐԶԶԷ: «Լէյտենանտ Բուրակով» ակաւանաւը, դուրս գալով Նիւ-Չեռլանդից, հասաւ Պորտ-Արտուր կիրակի ինն ժամին:—Երկուսուսական ակաւանաւները փորձում էին զօղով մանել պօրտ-արտուրեան նաւահանգիստը, բայց իր ժամանակ տեսնվեցին ափային բաւտարէաններից: Նրանցից մէկը ջրասույզ արկից Ոսկէ լեռան ստորոտում, իսկ միւսը № 22 բատարէայի մօտ երրորդից ընկաւ խողովակը: Զորքերը հեռացան: Բերապահ զօրքի ոգու տրամադրութիւնը գերազանց է, ուստի պաշարները բաւարար են: Շաբաթ օրը ընկած են 50 հապոնական լրտեսներ առանց ցոյց տալու նրանց կալանաւորման տեղը: Գնացքները երթեկում են 16 մղոն հեռաւորութեամբ բերդից:

ՏՕԿԻՕ: (Րէյտէր): Երկուսուսական ցամաքային ոյժերի գլխաւոր հրամանատար մարշալ Օյիսմա այսօր ճանապարհ ընկաւ պատերազմական գործողութիւնների բռնը, Կուրմա, Ֆուկուշիմա գեներալների և բազմաթիւ շտաբի ուղեկցութեամբ:

ՏՕԿԻՕ (Րէյտէր): Կուրօկին հաղորդում է, որ առաջապահ կուր մէջ Մօդուլինեան լեռնանցքում յունիսի 21-ին առաւօտեան չորս ժամին ուսանական երկու վաշտեր շրջապատեցին մեր պահակախմբերին, որոնք գտնվում էին երկու կիրճի մէջ: Գեղի ունեցաւ յուրաքանչյուր լեռնանցքից: Տեղի ունեցաւ յուսահատական սուրինային ընդհարում: Թշնամին, որին հաղածում էր մեր գլխաւոր պահակախումբը, հեռացաւ դէպի Տիւալուան: Մօտաւորապէս նոյն ժամանակ ուսանական շտաբի վեցին մեր պահակախմբերի վրա Մինկայից դէպի արեւմուտը, բայց նոյնպէս յետ մղվեցին: Մեզ մօտ սպանվեցին 19 մարդ և երկու օֆի-

